## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ծաղկունք, 4 74 88, tcaxkunq@yandex.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԱՊՐԻԼԻ 2015թվականի N 20

### ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին ,մասի 17-րդ կետով, <Գնումների մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 6)-րդ կետով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքում առուների մաքրման և փողոցների խճապատման աշխատանքների կատարման համար, կնքել գնման/ծառայությունների մատուցման / պայմանագիր՝ Լեոն Գյոզալյանի հետ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2015թ. ապրիլի 07
գ.Ծաղկունք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ծաղկունք, 4 74 88, tcaxkunq@yandex.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ԱՊՐԻԼԻ 2015թվականի N 21

## ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Գովազդի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 8-րդ կետով և հիմք ընդունելով արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն ստանալու վերաբերյալ Ժորա Մարարյան կողմից ներկայացված 2015թվականի ապրիլի 16-ի դիմումը.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Թույլատրել Ժորա Մարարյանին Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի Հոկտեմբերյան փող. թիվ 19 հասցեում տեղադրել 2.22քմ մակերեսով արտաքին գովազդ 2015 թվականի ապրիլի 16-ից մինչև 2015թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2015թ. ապրիլի 16
գ.Ծաղկունք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ծաղկունք, 4-74-88, tcaxkunq@yandex.ru


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ԱՊՐԻԼԻ 2015թվականի N 22

## ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՎՃԱՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով,Հայաստանի Հանրապետության Կառավարության՝ <Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման կարգը հաստատելու մասին> 2001թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման հավելվածի 57-րդ կետով.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արմավիրի մարզի Ծաղկունքի համայնքի սեփականությունը հանդիսացող 12.0585հա գյուղատնտեսական նշանակության, արոտավայր հողատեսքի հողամասը մրցույթով տրամադրելու համար վարձավճարի մեկնարկային չափը սահմանել՝ 200.0հազ./երկու հարյուր հազար/դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2015թ. ապրիլի 17
գ.Ծաղկունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ծաղկունք, 4 74 88, tcaxkunq@yandex.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ԱՊՐԻԼԻ 2015թվականի N 23

## ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք գյուղական համայնքի ավագանու 2006 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 11 նիստի որոշումը՝ հասցեավորում տալու մասին՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արմավիրի մարզի Ծաղկունք գյուղական համայնքում Աշոտ Մակեդոնի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող 0.090հա /ծածկագիր 04-052-026-004/տնամերձ հողը հասցեավորել՝ Թումանյան 1 փողոց թիվ 17 տնամերձ հող:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի <Վաղարշապատ> սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցման համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2015 թ. ապրիլի 28
գ.Ծաղկունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ծաղկունք, 4-74-88, tcaxkunq@yandex.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ԱՊՐԻԼԻ 2015թվականի N 24-Ա

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԻ ՎԱՐՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015թվականի ապրիլի 8-ի՝ «Համայնքային պաշտոնական համացանցային կայքերի վարման օրինակելի կարգը հաստատելու մասին» թիվ 280-Ա հրամանը.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի գյուղապետարանի պաշտոնական համացանցային կայքի վարման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Պաշտոնական կայքում տեղեկատվության հասանելիության ապահովման, արդիականացման և տեղադրման գործընթացի կազմակերպման նպատակով, որպես պատասխանատու նշանակել առաջատար մասնագետ Լուսինե Մամիկոնյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2015թ. ապրիլի 29
գ.Ծաղկունք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ծաղկունք, 4 74 88, tcaxkunq@yandex.ru

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

17 ԱՊՐԻԼԻ 2015թվականի N 5

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <Հողային օրենսգրքի> 76-րդ հոդվածի 2-րդ կետի առաջին պարբերությամբ, 77-րդ հոդվածով, <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով.

## ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 12.585հա / հողատեսքը՝ արոտավայր, վկայական N 16042015-04-0019/ հողամասը վարձակալությամբ տրամադրելու համար ստեղծել մրցութային հանձնաժողով՝ համաձայն հավելվածի
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2015թ ապրիլի 17
գ.Ծաղկունք

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Ծաղկունք գյուղական համայնքի
ղեկավարի 2015 թվականի մարտի 17-ի
թիվ 5 կարգադրության

## Հանձնաժողովի Կազմ

| | | | |
|---|---|---|---|
| Հանձնաժողովի | նախագահ | Դավիթ Կարապետյան | / համայնքի ղեկավ/ |
| | քարտուղա | Հովհաննես Խաչատրյան | /աշխ. քարտուղար/ |
| | անդամներ | Մելիք Հարությունյան | / ավագանու անդամ / |
| | | Անգին Ամիրջանյան | / ավագանու անդամ / |
| | | Սարգիս Վարդանյան | / ավագանու անդամ / |